բում, կանգ է առնում մոտածկոտ մարդկանց ուսի ետեւ կամ կատաղի պար պարում չխչխկող ոսկորներով, այլ գրաչարի արկղից հանած կամ լյոնօտիպի հալած կապարից կազմած երեք գիրեր, արագօրէն նետուած միլիոնաւոր ուրիշ գրերի մէջ:

S. O. S. յայտնում է անթելը եւ Նիւ Եորքի օդային գնացքում նստած մարդիկ, Բրոդուէյի վաճառականները, Պեկինի չինացին, Ղամաբլուի գիւղացին, Ֆլորիտայի պարտիզպանը, Փարիզի մետրոյում ճամբորդող մտահոգ Ֆրանսացին, մի վայրկեան իրենց գոյնը նետում են, պարապ աչքերով մէկ մէկի նայում ու ջղայնօրէն սեղմում իրենց ձեռքերը:

Եւ գիշերը, երբ այդ մարդիկ՝ յոգնած եւ մտազբաղ՝ կուչ են գալիս անկողինների մէջ իրենց մինակութեան հետ, S. O. S.-ը կամացուկ դուռը բաց է անում, աննշմարելի կերպով ներս մտնում եւ մութ կանանչ լոյսի նըման կոպերի տակ ընկնում:

Մարդիկ վախում են անհետացումից:

Մինչ իրականի մէջ անհետացում չկայ:

— Ուզում ես անպատճառ գնալ Դէ Վինչիի Cena-ն տեսնե՞լ: Աւելորդ է, բարեկամ: Լեոնարդօն դժբախտաբար որմանկարական փորձեր էր անում, նոր գիւտեր, գոյների նոր բաղադրութիւններ, պատը ծեփելու իբր թէ էր ուրոյն միջոցներ էր գտել, եւ հետեւանքը եղաւ այն, որ դարերի շրջանին ամէն ինչ փչացաւ: Գոյները պոկուել են, գծերը աննշմարելի են, գրեթէ ոչինչ չի երեւում: Պիտի հիասթափուես եւ աւելի լաւ է չգնաս,— ասում էին ինձ Միլանում իմ բարեկամները:

Ցիշում եմ բախտաւոր այն օրը:

Զլսեցի բարեկամներիս եւ ներս մտայ փոքրիկ եկեղեցու այն դահլիճը, ուր քանի՜ տարիներ աշխատել էր վարպետը:

Պատի վրայից հրամաւ գոյները չէին եւ ոչ գեղեցիկ գծաւորումները՝ ամէն ինչ թոշնած, պոկուած եւ անորոշի վերածուած էր՝ որ խօսում էին աչքերիս, այլ հոգեկան մի ինչ որ անբացատրելի մթնոլորտ, որ անմիջապէս պատեց ինձ, անձայն մի երաժշտութիւն, յամր մի երգ, որի հետ անմիջական հաղորդակցութեան մէջ մտայ:

Ներկայ էր ինքը Լեոնարդօն, կանգնած կեանքի կարեւոր այն կենդրոնում, ուր գոյնը եւ գիծը, ուր խօսքը եւ ձեւը, անկարող են արտայայտել՝ որովհետեւ արտայայտելը բաժանել ասել է, մասնաւորել, ընտրել՝ ա՛յն ինչ որ ամենաէականն է, ինչ որ միութիւն է, ամբողջութիւն եւ ուր կեանք եւ մահ միացած են:

Ու ահա, որմանկարը մեռել էր, իսկ մնացել էր էականը: Վայր էր ընկել ձեւը, թառամել էին գոյները, իսկ ոգին կենդանի էր եւ լուսաւոր, ինչպէս ամպերի տակ ընկած արեւի լոյսը:

Երբ դուրս եկայ, կարծես շատ բարի մի ոգի ձեռքիցս բռնած տանում էր ինձ երանելի մի երկիր: Լեցուն էի մանկական թարմութիւնով: Ամէն ինչ նոր էր եւ գեղեցիկ:

Տեսնել ամէն ինչ այնպէս, ինչպէս առաջին անգամ:

Լռում է միտքը, լռում են զգացումները եւ մեղ խօսում է մի ինչ որ ուժ, որը մեր մէջն է եւ միեւնոյն ժամանակ մեզանից դուրս է: Այդ ուժը՝ չնայած որ քիչ առաջ վտանգը յիշողութեանս մէջ իր բազուկները վեր էր բարձրացրել՝ հիմա նորից թաւալ է գալիս մենակեաց ծովի հետ, ծառերի հետ սարսռում է, տերեւների դանդաղ մահը հասկանում, տունների լքուած արձանները ընդգրկում ու կղզու սահմանները անցնելով, մեծ ալիքի նման ծփում է անեզր մի երկրում:

Քամին իր շրթունքների վրայ սառոյց է քսել: Քայլերս արագացնում եմ:

Ի՜նչ լաւ է այդպէս:

* * *

Ես չեմ տեսել Ալիշանին:

Բայց ամէն անգամ երբ նաւից իջնում եմ Սուրբ Ղազար, փայտէ սանդուխների վրայով բարձրանում եմ վեր եւ մտնում պարտէզ, փոքրահասակ մի ծերունի վարդապետ, ձիւնի նման ճերմակ մօրուքով, նիհար, մի քիչ կուչ եկած, ձեռքերը սեղմած կրծքի վրայ, մեծ, վարագուրուած բայց վառվռուն աչքերով, շուքի նման, անցնում է ծառուղիից, սահում բարձր նոճիների տակ եւ անհետանում:

Ցետոյ անցնում եմ, աչքերս հեռուները մտն ածելով. կանգ առնում ջուրի մէջ թառած դողդողացող պատուհանների առջեւ. երազկոտ, մտահոգ մտնում եմ վանք ու մի վայր-

Հայ մատենագրության թուանշանային գրադարան